ՔԱՂՎԱԾՔ

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝
2020 թվականի հունիսի 10-ի, ժամը 18:00-ի առցանց նիստի
N 10 արձանագրությունից

ԼՍԵՑԻՆ.- Իրավագիտության և քաղաքագիտության ամբիոնի դոցենտ, քաղաքական գիտությունների թեկնածու **Սիրակ Սարիբեկի Հովհաննիսյանի «Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության ռազմավարության մշակման հայեցակարգային մոտեցումների շուրջ»** մենագրության հրատարակությունը երաշխավորելու մասին հարցը:

Զեկուցող՝ գիտության գծով պրոռեկտոր, տնտեսագիտության դոկտոր, դոցենտ Թ.Մկրտչյան:

Զեկուցողը նշեց. մենագրությունը նվիրված է հայ քաղաքական և պետական-քաղաքական մտքի որոշ բաղադրիչների բովանդակային վերլուծությանը՝ պրագմատիկ քաղաքականության տեսանկյունից: Միաժամանակ առաջարկվում է հայոց պետական-քաղաքական մտքի նորովի վերարժևորում և վերագնահատում՝ XXI դարի քաղաքական և աշխարհաքաղաքական մարտահրավերներին պատշաճ մակարդակով դիմակայելու նպատակով: Աշխատության մեջ ընթերցողի դատին է ներկայացվում մի նոր՝ եռաչափ քաղաքականության մոդել, որը, հեղինակի կարծիքով, կարող է օգտակար լինել, մասնավորապես՝ արտաքին քաղաքականության որոշակի հիմնախնդիրների լուծման գործում: Մենագրության մեջ արծարծված հարցերը կարող են հետաքրքրել քաղաքականությամբ զբաղվողներին, կարող է կարևոր դերակատարում ունենալ տվյալ ոլորտում ուսանողների գիտելիքների ամրապնդման, ինչպես նաև ոլորտի մյուս մասնագետների համար: Մենագրության վերաբերյալ ստացվել են 3 (երեք) դրական կարծիքներ՝

1) Ք.Մ.Քեռյան՝ Երևանի պետական համալսարանի քաղաքական ինստիտուտների և գործընթացների ամբիոնի վարիչ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
2) Ն.Ք.Բաղդասարյան՝ Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի հասարակական գիտությունների ամբիոնի վարիչ, քաղաքական գիտությունների թեկնածու, դոցենտ,

3) Հ.Հ.Մանուչարյան՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի իրավագիտության և քաղաքագիտության ամբիոնի դոցենտ, պատմական գիտությունների թեկնածու:

Բոլոր կարծիքներում նշվում է, որ մենագրությունն արդիական է, բարձրարժեք, գիտականորեն հիմնավորված և կիրառական: Այն ունի գիտահանրամատչելի բնույթ, լեզուն և ոճը համահունչ են քաղաքագիտական ուսումնասիրություններին ներկայացվող պահանջներին:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հիմք ընդունելով գրախոսների դրական կարծիքները, իրավագիտության և քաղաքագիտության ամբիոնի, ֆինանսական ֆակուլտետի խորհրդի, գիտական խորհրդին կից հրատարակչական հանձնաժողովի նիստերի որոշումները՝ իրավագիտության և քաղաքագիտության ամբիոնի դոցենտ, քաղաքական գիտությունների թեկնածու **Սիրակ Սարիբեկի Հովհաննիսյանի «Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության ռազմավարության մշակման հայեցակարգային մոտեցումների շուրջ»** մենագրությունը երաշխավորել հրատարակության (որոշումն ընդունվեց միաձայն. կողմ՝ 58, ձեռնպահ՝ 0, դեմ՝ 0):

Գիտական խորհրդի նախագահ՝ **Դ. Գալոյան**

Գիտական խորհրդի քարտուղար՝ **Ն. Դարբինյան**

2020 թ. հունիսի 10
Երևան